ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻԱՆՈՒՄ Է ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏՈԿՀՈԼՄԻ ՍԵՍԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ԿՈՄՈՒՆԻԿԵՆ

„Մեր մեծ Հայրենիքի սահմաններում եղած Ռուսական Ուղղափառ Եկեղեցու բոլոր թեմերի եպիսկոպոսության, հոգեվորականության եվ հավատացյալների կողմից մենք հայտնում ենք մեր միահամուռ համաձայնությունը Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեի Ստոկհոլմի սեսիայի բանաձեվերի հետ:

Համոզմունք հայտնելով, որ այդ որոշումների կենսագործումը կնպաստի ամբողջ աշխարհում խաղաղության հետագա ամրապնդմանը, մենք դիմում ենք բոլոր եղբայրական ինքնագլուխ Ուղղափառ Եկեղեցիներին՝ կոչ անելով միանալ վերոհիշյալ որոշումներին եվ առավելագույն ջանքեր գործադրել հավատացյալների մեջ խաղաղությունը պաշտպանելու գործը ուժեղացնելու նպատակով:

ԱԼԵՔՍԻ, Մոսկվայի և համայն Ռուսիայի Պատրիարք

Սրբազան Սինոդի անդամներ՝

ՆԻԿՈԼԱՅ, Կրուտիցկիի և Կոլոմնայի միտրոպոլիտ:
ԻՈԱՆՆ, համայն Ուկրաինայի էկզարխ, Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ:
ԳՐԻԳՈՐԻ, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ:
ԻՈՍԻՖ, Վորոնեժի և Օստրոգոժի արքեպիսկոպոս:
ԱՐՍԵՆԻ, Ուֆայի և Բաշկիրիայի եպիսկոպոս:
ՖԻԼԱՐԵՏ, Ռյազանի և Կասիմի եպիսկոպոս»: